

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆՈՒՐԴՈՒՄՆԵՐ

## ԺԳ ԴԱՐՈՒ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՑ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հակառակ երևութապես տեսական բնույթի՝ իմաստասիրությունը հիմնականին մեջ իմացական կիրք մըն է, որ կը ձգտի ճանաչողության և մասնավորաբար, ինքնաճանաչության:

Իսկ ինքնությունը պարզապես գիտակցությունն է արժեքներու և հարաբերությանց. սակայն, երբ շփոթ է մարդուն և ընկերային-քաղաքական միջավայրին միջև՝ հարաբերությանց բնույթը, ինքնությունը կը վերածվի գոյութենական տազնապի մը՝ պատճառելով զարտուղի երևույթներ:

Ինքնության շփոթեն ծագում առած զարտուղություններն մեկն է հայ-արաքական մը-շակութային հարաբերությանց հարցը: Զարտուղություն կը կոչենք զայն, որովհետև հասկապես Միջին Արևելյան սփյուռքահայ մշակույթին մեջ՝ տեսական մտածողությունն ու զըրականությունը զարգացած են որոշապես բաժնված պատմական իրավիճակն. այսինքն, հակառակ այն իրողության, թե ութներորդ դարեն ետք և մինչև մեր ժամանակները՝ արաքական-իսլամական քաղաքակրթությունը եղած է հիմնական միջավայրը, որուն մեջ զարգացած է հայ մշակույթը, այս հանգամանքը չէ գտած համապատասխան արտացոլումը տեսական գրականության մեջ: Ուրիշ խոսքով, միջմշակութային հարաբերությունները իրողապես ունին ավելի քան տասներկու դարու պատմություն, իսկ այս հարաբերությանց ուսումնասիրությունը և բնորոշումը կը մնա գրեթե անմշակ մարզ:

Այս զարտուղությունը անհատական և հոգեբանական մակարդակի վրա ունեցած է, անշուշտ, անբաղձալի հետևանքներ, սակայն այս նյութը դուրս կը մնա մեր ահմամանքն:

Միջմշակութային հարաբերությանց մարզին մեջ և այդ հարաբերությանց տեսականացումին ուղղված աշխատանք մըն է այս հոդվածը: Սակայն, զուտ մարդկային մակարդակի վրա ևս այս և մնա աշխատանքներ կը ծառայեն բնորոշելու մեր՝ Միջին Արևելյան սփյուռքահայուն, մշակութային ինքնությունը:

Այս մարզին անմշակ ըլլալու պարզապես ինքնին հսկայական դժվարություններու առջև կը դնե ուսումնասիրողը. կա նաև ուրիշ դժվարություն մը. ուղղակի փաստերու անկախությունն է անհկա: Մասնավորաբար իմաստասիրության մարզին մեջ գոյություն ունի այս հարցը. բժշկագիտության, աստղագիտության, ժողովրդական արվեստներու, պատմագիտության մեջ փաստերը և նյութերը բավական հարուստ են. կարելի է և չափազանց անճշաժեշտ՝ սկսիլ այս մարզին մշակումին:

Ցարդ մեզի ծանոթ միջնադարյան իմաստասիրական գրականության մեջ՝ «ի Տանկաց Իմաստասիրաց Գրոց Քաղեալ Բանք»ը միակ ուղղակի թարգմանություն-ամփոփումն է իսլամական իմաստասիրութենն:

Հովհաննես Պուզ Երզնկացիի այս երկը առաջին անգամ հրատարակված է Ս. Արև-շատյանի կողմէ Բանքեր Մատենադարանի մեջ (թիվ 4, 1958, էջ 297—315, Բառաքարանով և օտար բառերու բառարանով հրատարակիչին կողմէ):

Միջնադարյան ոճով այս թարգմանություն-ամփոփումը չունի իբրև մանր ճայ իմաստասիրության պատմության մեջ: Աղբյուրները, այսինքն՝ «տաճիկ իմաստասիրներու գրությունները», որոնցմէ կատարած է Երզնկացին իր քաղվածքները, կը մնային անհայտ: Այս աղբյուրներուն բուն էությանն նվիրված հոդված մը հրատարակեցինք 1977-ին, Հայկազեան Հայագիտական Հանդեսին մեջ<sup>1</sup>:

Ներկա հոդվածով կ'անդրադառնանք «ի Տանկաց...»ին՝ և ընդհանուր առմամբ Երզնկ-

<sup>1</sup> Տե՛ս Սեղա Պարսումեան-Տատոյեան, Յովհաննես Պուզ Երզնկացիի Ի Տանկաց Իմաստասիրաց Գրոց Քաղեալ Բանք՝ ին Աղբիւրը՝ «Բասա՛» էլ Ինչուան Այ-Ասֆա», Հայկազեան Հայագիտական Հանդես, Զ. հատոր, 1977—1978, էջ 51—70:

կացիի մտածողության առնչված առանձին կենսական հարցերու, անշուշտ, երկին աղբյուրներում ստուգումին լույսին տակ: Եվ որովհետև նյութը այնքան բարդ է, որ անհրաժեշտ է ընթերցողը նախ ծանոթացնել անոր հիմնական բաղադրիչներուն, այսինքն՝ հեղինակին և երկին: «Ի Տաճկաց...»ը կը կցենք ամբողջությամբ, սակայն՝ վերադասավորյալ: Համակարգումի և վերակարգումի այս նախաձեռնությունը կը ծառայէ առավելագույն հստակության, թե՛ մեր նպատակներուն և թե՛ հայ իմաստասիրության աշխատողներուն համար:

## I. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԼՈՒՋ ԵՐՋՆԿԱՑԻ-ԱՆՁԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից բանասիրությունը կ'ընդունի, թե Երզնկացին պետք է որ ծնած ըլլա 1290-ի շուրջ, Երզնկա: Իսկ երբ իր ծննդյան թվականը կը դրվի ավելի ուշ՝ ատիկա կը նշանակեն, թե կա շփոթ՝ իր և Հովհաննես Ծործորեցիին միջև: Բազմաթիվ բանասերներ նույնացուցած են այս երկու հեղինակները, իսկ քիչեր հստակ կերպով զանազանած երկուքը: Հակառակ կարգ մը անճշտությանց՝ Լ. Խաչիկյան, Հ. Քյուրախյան և Գ. Զահուկյան աներկբայորեն Հովհաննես Պուղ Երզնկացին կը նկատեն ԺԳ դարու հեղինակ:

Յուրիմացությունը երկու Երզնկացիներուն ինքնության շուրջ ներկայիս լուծված է վերջնականապես Ա. Սրապյանի կողմէ. Պուղին և Ծործորեցիին տարբեր անձեր ըլլալու պարագան մանրամասն կերպով և անշուշտ փաստերով կը հիմնավորվի Սրապյանի Երզնկացիին նվիրված հատորին մեջ<sup>2</sup>:

## II. «Ի ՏԱԾԿԱՑ ԻՄԱՏԱՍԻՐԱՑ ԳՐՈՑ ԶԱՂԵԱԼ ԲԱՆՔ ԹՈՎՀԱՆՆԵՍ ԵՋՆԿԱՑԻՆ»

Երզնկացիի այս երկը պահպանված է միայն մեկ ընդօրինակությամբ, Մատենադարանի թիվ 6870 ձեռագրին 91ա—111ա էջերուն վրա:

Ձեռագրին առաջին հրատարակության առիթով Արևշատյան կը նշէ իր հառաջաբանին մեջ, թե ընդօրինակությունը պետք է որ կատարված ըլլա ԺԷ դարուն: Գրիչը անվարժ է, հետևաբար՝ ձեռագիրը թերի, տառասխալներով և բազմաթիվ լեզվական սխալներով. օտար բառերու առատ գործածությունը հոն ըստ երևույթին պատճառ եղած է հավելյալ սխալներու, գրիչին կողմէ անշուշտ:

Ձևով և բովանդակությամբ՝ «Ի Տաճկաց...»ը ամփոփ քաղված մըն է արաբերեն քրեանագրեն, գոր ինք խորագրին մեջ միայն կը հիշատակէ իբրև «տաճիկ իմաստասերներու» գրություններ: Ընդամենը քառասուն էջի վրա խառն և անկազմակերպ ոճով ներկայացված են զանազան կարգի գաղափարներ և տեսություններ: Հոն կան իմացաբանական, հոգեբանական, բնագանցական, տրամաբանական, հանքաբանական, աստղաբաշխական-աստղագիտական և այլբիսական նյութեր:

Որոշ կողմերով, «Ի Տաճկաց...»ը նման է Միչին Արևելքի այս երկիրներուն մեջ ընդհանրացած ամփոփումներու և կամ քաղվածքներու, մեծ մասամբ հունական դասական և նորպղատոնական ավանդություններեն: Իսկամ իմաստասերներեն շատեր, եթե ոչ թուրք, այս կարգի քաղվածք-թարգմանությանց միջոցով է, որ ծանոթացած են հունական և նորպղատոնական մտածողության, որովհետև անոնցմէ ոչ մեկը ծանոթ եղած է հունարեն լեզվին: Իսկ թարգմանիչները և ամփոփողները եղած են ասորի, հույն և այլ քրիստոնյա եկեղեցիի հայրերը և կրոնականները: Մասնավորաբար նորպղատոնականության պարագային անցումի քրիստոնեական խողովակը անպայմանորեն իր դրոշմը դրած է տվյալ դպրոցին գաղափարներուն վրա: Տեղին է նաև հոս հիշատակել, որ թե արաբ և թե իսլամ իմաստասերներուն կարևոր մեծամասնությունը հետևորդներ են նորպղատոնականության:

«Ի Տաճկաց...»ը ամբողջությամբ վերցված է իսլամական գաղտնուտուց և հավաքաբանական աղանդի մը՝ «Մաքրության Եղբայրներու» Հանրագիտարանեն, որ կը կոչվի **Մաքրության Եղբայրներու Քուղթերը** (կամ Նամակները)՝ **Ռասա էլ Իխուան էլ-Մաֆա:**

Ներկա հոդվածով կը վերցնենք միայն «Ի Տաճկաց...»ին գրության թվականին մասին մեր վարկածը, որ բանասիրական գյուտ մը ըլլալու կողքին, բայց ատկեն ավելի՝ կը ծառայէ նոր տվյալներու հիման վրա բացատրելու Երզնկացիի մտածողությունը՝ հիմնովին տարբեր լույսի տակ:

Երզնկացիի կյանքին և գործունեության վրա առաջին ակնարկով, կարելի է ընդունելի նկատել այն վարկածը, թե Երուսաղեմ և Սուրիա, ապա Կիլիկիա կատարած իր ճամբորդությանց ընթացքին է, որ անիկա պետք է որ ձեռք ձգած ըլլա տաճիկ կամ իսլամ իմաստասերներու գրությունները: «Ի Տաճկաց...»ին աղբյուրներուն հարցի քննությունը թողնեն

<sup>2</sup> Տե՛ս Ա. Սրապյան, Յովհաննես Երզնկացի, Եր.՝ 1958, էջ 19:

յով մեկ այլ առիթի, հոս անցողակի կերպով կարելի է լուսաբանություն մը տալ տաճիկ բառին շուրջ: Աճշուշտ, տաճիկ կը նշանակէ ընդհանուր առմամբ՝ մահմետական. ԺԳ դարուն իսլամական իմաստասիրության ծանրության կեդրոնը արդեն փոխադրված էր Արևմուտք, Սպանիա, իսկ Միջին Արևելքի մեջ, և մասնավորաբար տասնէն տասներեքերորդ դարերուն՝ իմաստասիրությամբ (բառին թույլ իմաստով) կը զբաղէին Իսմաիլականները, որոնք նույնպէս կը կազմեն իսլամական աղանդ մը: Այս շարժումը ոչ միայն գտած էր լայն տարածում՝ այլ նաև ստացած քաղաքական հանգամանք և ծանր ազդեցություն: Իրողությունը այն է թէ, ինչպէս պիտի բացահայտենք հետագային, Մաքրության Եղբայրության գաղափարաբանությունը հիմնականին մեջ սկսած և զարգացած է քաղաքական ծրագիրով, Աբբասյաններու խալիֆայության հակադրված:

Ուրեմն Երզնկացին շատ հավանաբար կրնա ակնարկած ըլլալ Իսմաիլական իմաստասերներու:

Երզնկացիի անմիջական նախորդներուն, նաև իր բոլոր գործերուն երկար ընթերցումներն ետք, ներկայիս եկած ենք այն եզրակացության թէ «Ի Տաճկաց...»ը պետք է որ գրված ըլլա Երզնկացիի կանոնի երիտասարդության շրջանին: Ծատ հավանաբար՝ երբ տակալին նոր սկսած էր հետաքրքրություն ցոյց տալ գիտություններու և առհասարակ ուսման նկատմամբ, այսինքն՝ 1280-ական թվականներուն, երբ տակալին ուսանող էր, պետք է որ կատարած ըլլա այս աշխատանքը:

Հիշյալ վարկածը հիմնավորող փաստեր են «Ի Տաճկաց...»ին լեզուն և ընդհանուր կառույցը: Սակայն այս երկու փաստերեն գատ և անոնցմէ անկախ կա ուրիշ հանգամանք մը առնչված Մաքրության Եղբայրներուն և մասնավորաբար Իսմաիլական աղանդին քարոզչական գործունեության: Առաջին Իսմաիլականները իրենք զիրենք կոչած են Մաքրության Եղբայրներ. ըլլալով ընդդիմադիր հավաքականություն մը թէ կրօնական և թէ քաղաքական մակարդակի վրա, անոնք իրենց վարդապետությունը տարածած են գաղտնի՝ քարոզչներու միջոցով. թեև ուղղված ժողովուրդին քոլեր դասակարգերուն՝ քարոզչությունը մասնավորաբար իրեն նշանակետ ընտրած էր պատանիները. ըստ աղանդին մտածողության՝ ուշիմ պատանիները լավագույնս կրնան ընկալել նոր գաղափարներ: Ըստ երևույթին պատանի Երզնկացին լավ թեկնածու էր: Ավելի քան հավանական է այն կարելիությունը, թէ իրեն պետք է որ մոտեցած ըլլա քարոզիչ մը և փոխանցած Թուղթերուն ընդհանուր քովանդակությունը:

«Ի Տաճկաց...»ին հեղինակը, ինչպէս վերը հիշատակեցինք, սկսնակ մըն է իմաստասիրական ուսմանը: Այս պարագան կը ցուանա երկին լեզվին և, անշուշտ, նյութերը հասկնալու և դասավորելու ձևին մեջ: «Ի Տաճկաց...»ը գրված է խառն լեզվով՝ գրաբար և միջին հայերեն, հաճախ բարբառային դարձվածքներով գունավորված:

Երկը կը պարունակէ ավելի քան հարյուր օտար եզր, մեծ մասամբ՝ արաբերեն: Տառադարձությունները կատարված են անհետևողական կերպով. օրինակ՝ հանքային տարր կամ մետաղ բառին փոխարեն գործածած է արաբերեն «մա'տան» բառը, տառադարձված ձևերն են.—«մայտան», «մադտայն», «մատան», «մատայն», և այլն: Ուրիշ օրինակ մըն է բուն էություն կամ գոյացություն՝ արաբերեն «ճաուհար» բառը. տառադարձված է «ճոհար», «ճոհար», «ճաուհար»:

1272-են ետք գրված իր գործերուն կամ խոսած ճառերուն մեջ հազվադեպորեն կը հանդիպինք «Ի Տաճկաց...»ին մեջ գործածված օտար-մասնագիտական եզրերուն: Գրեթե բոլոր եզրերը վերածված են հայերենի և ստացած հետևողական իմաստ:

«Ի Տաճկաց...»ին լեզվին առնչված զանազան երևույթները կ'առաջնորդեն մեզ զարգացնելու ուրիշ վարկած մը Երզնկացիին արաբերեն լեզվի ծանոթության մասին: Մեր սկզբնական կարծիքը սյն էր, թէ Երզնկացին պետք է որ ծանոթ եղած ըլլա արաբերեն լեզվին: 1977-են ետք (այսինքն՝ մեր հոդվածն ենք, տե՛ս ծանոթ. թիվ 1) և անկէ ի վեր կատարած մեր աշխատանքներուն հիման վրա եկած ենք այն եզրակացության, թէ Երզնկացին Մաքրության Եղբայրներուն Թուղթերուն քովանդակության ծանոթացած է երկրորդ անձի մը միջոցով: «Ի Տաճկաց...»ին ոճն դատած՝ այս անձը սովորական թարգմանիչ մը կամ անձ մը չէ, այլ տվյալ վարդապետության հետևորդ և կամ քարոզիչ: Այս անձը վըստահաբար ծանոթ է հայերենի, բայց առավելագույնը՝ տեղական բարբառին և ոչ թէ մաքուր գրաբարի կամ նույնիսկ միջին հայերենի: Ուրեմն նյութին տեղյակ այս «թարգմանիչը» փորձած է նյութին և իմաստասիրության անտեղյակ երիտասարդ Երզնկացիին բացատրել Եղբայրության չափազանց բարդ տեսությունները: Այսպէս, գոյացած է կրկնակի դժվարություն մը՝ տեսական և լեզվական:

Թէ լեզվական և թէ տեսական դժվարություններուն պարագային ալ, տառադարձությունը եղած է անմիջական լուծումը: Այս «լուծումին» ուղղակի հետևանքը եղած է եզրաբանական շփոթ, այսինքն՝ նույն իմաստին համար գործածված են տարբեր բառեր և պա-

տահած է նաև հակառակը, այսինքն՝ նույն բառը գործածված է տարբեր իմաստներու համար: Օրինակ մըն է «ֆքրիլ» բառը, որ պարզապես կը նշանակէ մտածել (արաբերէն «ֆաքքարա» բառը կը նշանակէ մտածել կամ մտածեց. արմատն է՝ «ֆիքր», միտք):

Երզնկացիքն հաճախ կը գործածեն «ֆքրիլ» բառը, սակայն տարբեր իմաստներով՝ երբեմն իբրև «դիաս» կամ մտահանգում՝ «սիլլոնիզմ», երբեմն իբրև ապացուցական աշխատանք, երբեմն իբրև զուտ տրամաբանություն: Ուրիշ օրինակ մըն է «ճաւհար» կամ «ճոհար» բառը: Մաքրության Եղբայրության մտածողության մեջ այս բառը կը նշանակէ գոյացություն, իսկ ընթացիկ արաբերէնի մեջ՝ բուն էություն, կորիզ: Երզնկացիքն նյութ, գոյացություն, հյուլէ, «ճոհար» բառերը կը գործածեն առանց մասնավորելու որևէ իմաստ և փոխադարձաբար: Կացությունը կը բարդանա նկատի առած այն իրողությունը, թէ Մաքրության Եղբայրության իմացական համակարգին մեջ բոլոր եզրերը ունին մասնավոր իմաստներ և կը խորհրդանշեն որոշ տեսություններ և իմացքներ: Այս տեսություններուն բնականաբար անտեղյակ է Երզնկացիքն, և միայն շատ ուշ, հավանաբար, ըմբռնած է և ընդունած որոշ կողմեր Եղբայրության աշխարհայացքին: Սակայն այն ժամանակ, երբ կատարած է ամփոփումը, ինք ևս գտնված է շփոթի մեջ:

Կա նաև ուրիշ պարզագույն մը, որ կը հիմնավորէ «Ի Տաճկաց...»ին բերանացի կերպով իրեն փոխանցումին մասին մեր վարկածը: Արաբերէն լեզվին մեջ բառերուն հնչումները կը փոխվին ըստ պարագայի. եթէ գրական է խոսված լեզուն, բառերը կ'ունենան ճիշդ հնչում. իսկ սովորական խոսակցական բարբառներուն մեջ բառերը կ'աղավաղվին, կը կրճատվին, կը դյուրացվին: Երզնկացիի խոսակցիցը վստահաբար ծանոթ է գրական արաբերէնի, որ ընդհանուր է բոլոր ժողովուրդներուն, որոնք կը կարդան այս լեզուն, անհիշ նաև արաբերէն խոսող է, հետևաբար խոսակցության ընթացքին կը փոխէ բառերուն բուն հնչումը: Ուղղակի օրինակ մըն է «նիսպաթ» բառը, որ կը նշանակէ համեմատություն: Խոսակցական ռճով՝ բառը կը հնչվի «նըսպէ» կամ «նըսպա» կամ «նըսպէթ», և այլն: «Ի Տաճկաց...»ին մեջ կը գտնենք երկու ձևերն ալ, այսինքն՝ թէ խոսակցական և թէ գրական՝ «նիսպաթ» և «նըսպաթ»: Ուրիշ օրինակ մըն է «նաֆա» բառը, որ կը նշանակէ հոգի: Երզնկացիքն թարգմանիչը արագ բացատրության ընթացքին կրնա բառը հնչած ըլլալ զանազան ձևերով, ուրեմն «Ի Տաճկաց...»ին մեջ կը գտնենք «նաֆա», «նափա», «նաու»:

Որովհետև «Ի Տաճկաց...»ին մեջ նյութերը տրված են առանց դասավորումի, նույն նյութերուն և նույն հարցին վերադարձված է մեկէ ավելի անգամներ. մյուս կողմէ՝ տարբեր տեսություններ ներկայացված են առանց հստակ կառույցի: Օրինակ, հոգիի տեսությունը, արտազեղական տեսությունը և բնագանցական տեսակետներ գրեթէ անզանազան լի կերպով ազուցված են իրարու: Բացահայտորեն, իմաստասիրության անտեղյակ սկզբնակի մը գործն է այս երկը, սակայն այս պարագան ոչ մեկ ձևով կը նսեմացնէ անոր արժեքը և կարևորությունը հայ իմաստասիրության մեջ: Ընդհակառակը՝ «Ի Տաճկաց...»ը կը բանա բոլորովին նոր և ցարդ անծանոթ մարզ մը հայ-արաբական իմաստասիրական հարաբերությանց պատմության մեջ:

«Ի Տաճկաց...»ին բովանդակությունը և անոր առնչված բազմաթիվ հարցերը աստիճանաբար պիտի վերցնենք մեր հետագա հոդվածներուն մեջ, ուստի դրանց միջև ստեղծելու համար տրամաբանական շարունակականություն մը և ընթերցողին հայթայթելու համար տեսական խարխիս մը, այս հոդվածին կը կցենք «Ի Տաճկաց...»ը վերադասավորյալ, ըստ իր իմաստային բովանդակության:

Երկին բացառիկ կարևորությունն է, որ կ'արդարացնէ մեր նախաձեռնությունը զայն վերադասավորելու. Երզնկացիքն հետագային միշտ հավատարիմ մնացած է «Ի Տաճկաց...»ին ռզիկին, որովհետև իրողությունը այն է, թէ իր դարուն մեջ չափազանց գրավիչ է Եղբայրության համակարգը. հայկական նոմինալիզմին անմիջականորեն ծնունդ տվող ազդակները արդեն գոյություն ունին հոն, այսինքն՝ դեպի իմացական աշխարհականացում ձգտումները արդեն իսկ իրենց արտահայտությունը գտած են Եղբայրության Թուղթերուն մեջ, իսկ երիտասարդ Երզնկացիքն համար ավելի գրավիչ վարդապետություն կարելի չէ երևակայել:

Ուրեմն «Ի Տաճկաց...»ին վերադասավորյալ հրատարակումը ըմբռնելի կառույցով և դասավորումով, երկին անծանոթ ընթերցողին կը հայթայթէ առիթը ճանչնալու կենսական տարրերն մեկը՝ որ պայմանավորված է Երզնկացիի մտածողության կազմությունն ու զարգացումը:

**ՄԵՂԱ ԳԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԱՆ**

## Ի ՏԱՃԿԱՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ ԳՐՈՑ ՔԱՂԵԱԼ ԲԱՆՔ

### [I ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ]

103բ Կարգ ուսումնականին նախ պարտ է զհամարողականն ուսանիլ, զի թուլթն է իմաստութիւն: Եւ ապա գեղլիտեսն, որ կերպարան եւ դիրքն է աշխարհիս: Եւ երկինքն թաղլուխ յերկրաշափութիւն ունի: Եւ ապա զաստղաբաշխականն, որով զվերին աշխարհն ճանաչէ:

Ապա զբանաւորութեան ուսումն, որով զխօսիցն իմանայ զգօրութիւն եւ զարուեստ, որ առանց խոկալոյ, խօսիլ չկարէ: Եւ ապա զքնութեան եւ զբժշկութեան ուսումն ուսանի՝ զմարմնոց մարդկան բաժանումն եւ զգեղեքն կազմել եւ զցաւերուն պատճառնին: Եւ ապա մտանէ յընթ[ան]-րական ուսումն եւ ապա յապացուցականն:

104ա Ապա ի մուճառ||ատ ճօհարնին եւ յասլն նիւթոցն, եւ ապա զմուճառոտո հոգին ու զխելքն ճանաչէ եւ ելանէ սօքօք ի սրբութիւն աստուծոյ զյարութիւն եւ զնոր աշխարհն գիտել. եւ այս են զիտութիւն ուսմանցն:

Առաջին ռատաթն է, որ է չորս արհեստն՝ համարողականն, երկրաշափականն, աստղաբաշխականն, երաժշտականն, երկրորդ՝ բանաւորութիւն, երրորդ՝ բնաբանականն: Երրորդ՝ (պէտք է որ ըլլայ շորրորդ, — ՍՊՏ) աստուածաբանականն, եւ բազում եւ մեծ իմաստութիւն կայր առ գտօղն համարողականին, որ եգիտ զիւր խասիաթնին մեծ Ֆիթադորոս հաքիմն:

### [II ԽՄԱՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ]

#### [Ա. Ճանաչողութեան չորս միջոցները]

92բ Եւ ֆքրին չորս իրօք լինի՝ խելացն իմացմամբ, եւ փորձելով, եւ զգայութեամբ, եւ հաւատալով:

— Խելացն արդարութեամբ, յորժամ ասեմք, հինգ ի հինգ՝ քսանհինգ է, եւ կամ քսան անգամ ի հինգ՝ հարիւր, կամ յորժամ ասեմք՝ արեգակն լուսաւոր է, կամ ասեմք եռանկին՝ եռանկին լինի կամ սուր կամ կանկնած:

— Իսկ փորձելն ի մէջ խելացն եւ զգայութիւն (իմա՛ զգայութեան) լինի, որպէս վարօղն սաւֆրային, սակամոնին եւ սաւդային զարիկոնն, զոր գիտէ խելքն, որ ոչ է պատահմամբ, այլ բնութեամբ, զի թէ պատահմամբ էր, լինէր ժամ մի, եւ ժամ մի ոչ լինէր:

— Իսկ զգայութեամբ է, որպէս այրելն հրոյն եւ կտրելն թրին, երկայնութիւն եւ լայնութիւն մարմնոյն, դրողութիւն եւ ծոռութիւն գրոյն, յաւելուլն եւ պակասիլն տուրնջեան եւ զիշերոյն:

93ա — Իսկ հաւատալն, որպէս շինուածն Երուսաղէմի եւ կամ մարգարէիցն եւ թագաւորացն թուականք եւ սոցին նմանեաց, որ չկենայ կարծիք ի հաւատալն: Եւ յայս շորիցս ոչ մնայ ինչ արտաքոյ ի ֆքրելն:

[Բ. «Ցաղագս ապացուցի»]

[Բ. «Ցաղագս ապացուցի»]

93ա Վասն որոյ գիտելի է, որ ամենայն տեսակս սկիզբն ունի, զոր խելքն իմանայ, որպէս ասացաք զճանապարհ քակելոյն անշնչին, այսպէս եւ զամենայն իր ի սահմանս գտցես: Երբ անունըն սեռ լինի, վայրէ ի տեսակս եւ զտեսակն՝ յանհատն, զի այս երեքովս լինի եղիասն:

91բ Ապացոյցն ի ֆքրելոյն լինի, եթ ֆքրելն է դիասն, ||որ է խոկալն. եւ սեռ ապացուցին ֆքրիլն է: Ու դիասն այն է, որ զսեռն բաժանէ մինչ յանհատն, որ է արձակիլ:

Աւրինակ յանշնչից ոսկին, որ ասեն այս սպիքայս այնչափ ոսկի է, այնչափ արծաթ է, այաչափ պղինձ: Ոսկոյն մարմինն զհւր գիճութիւն եւ զհւր տահնիաթն եւ զգօրութիւն ի հողոյն առեալ է, եւ մատանին տաքութիւն զինքն ի լուման եփեալ է՝ զջրին եւ զհողին յաւելուածն առեալ, որ այլ ոչ կարօտի բաժանման. հրոյն եփե[ա]լ է եւ արծաթն, բայց գիճութիւնն եւ գետնոյն յաւելուածն հաստել չէ: Եւ պղղընձին եփն միջնակն է, զի ժանդ է, որ եփումն առեալ է. այլ յիշել է գիճութիւնն եւ սեւ է դարձել ի քանին տաքութենէն, ապա հուրն զնա||այրէ եւ ցրուէ, որ

92ա այլ շրմնա գիճութիւն ջրային եւ տահնիաթն հողային:

Իսկ ոսկին, որ հաստատեալ է, բնաւ ոչ այրի. եւ այն է արձակելն խիստին, յորժամ ասեն ամենայն մարմին մասւոր արեր է, եւ մարմին ջրոյն առնած ի ճօհարէն:

է այս, զոր մեք կու տեսանենք, օդն է, չէ ֆալաքն. զի մեր զգայարանքս քան զհինգ կամ զտաս ֆարսախ աւելի շտեսնու, ապա յայտ է, որ խելացն ֆըրելովն գտանի ֆալաքն, որ է իմացականին եւ ոչ զգայարանօք: Եւ թէ ասես՝ թէ աստեղքն ընդէ՞ր երեւին. վասն առաւել մեծութեան իւրեանց եւ նրբութեան օդոյն ի մեր տեսութեանս անկանի, որպէս 2ո-

92բ հալն ի ելթն||երկինքն ի վայր զհւր լոյսն ի պաղ զիճութիւն աչաց մեր հասուցանէ որպէս պատկեր մի, որ ի ջուրն երեւի:

### [III ՄԱՐԿՈՒՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ—«ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄԸ»]

[Ա. «ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ԵՐԵՒ» ԿԵՐՊԵՐ ԸՍՏ ՄԱՐԴՈՆ ԲՆՈՒԹԵԱՆ]

100ա Առաջին իմաստութիւն է մարդուն ճանաչելն զինքն, որ լինի ինն իրոք:

— Առաջին՝ հայել ի կերպ մարմնոյն որ ի նմայ:

— Երկրորդ՝ հայել ի կերպ հոգոյն եւ ի գործն:

— Երրորդն՝ յերկուցն միութիւն, եւ որ յերկուք են.

(Առաջին կերպ)

...մարմնոյն հայելն է՝ յանդամքն ի յամենայն ի մորթի միսն, յոսկորսն եւ յայլս եւ զգործ ամենայն իմանալ, զգրուցին եւ զներքին: Եւ||ապա

100բ գիտել, թէ մարդն աշխարհ է, շորս տարերքն եւ նմանամ[ա] սունքն եւ այլ ամենայն: Եւ ի մարդն ինն ճօհար կայ. ոսկրն, դեղն, երակն, ճրագուն, արիւն, միսն, մորթն, զունկն, մազն: Տասն բնութիւն կայ ի մարդն, ի գլուխն ու զշիւնքն, կուրծքն վերի եւ ներքի, փորն, պորտն, անդամն, ծունկքն, ջիղքն, ոտքն, որ սոյն է ամենայն անդամոցն, զոսկրն, զջրերն, զկապերն: Տասն ջամոն (ջամոմ. ՍՊՏ) կայ ի մարդն՝ զուղն յիշողականն, լուսոյ երակ աչացն, երիկամն, աղիքն, փայծեղն, սիրտն, լեղին. այլն կայ յայլ տեղ գրած, որ ասէ թէ ԺԲ. ծակ կայ ի մարդն:

(Երկրորդ կերպ)

100բ Երեք են գիտութիւն մարդկան. առաջին՝ զգալիքն եւ զգայութեամբն, զոր կատարելաքն եւ տղաքն եւ այլք կենդանեաց ընկերութիւն ունին ըզգալն. [երկրորդն՝] խելացն իմացումն, որ կատարելոցն միայն է. երրորդն՝ ապացուցականն, որ իմաստնոցն է գործ:

101ա Կենդանիքն յաղէկն եւ ի վատն||ներհակաբար ունին. զերթիսն ի վարդին հօտն մեռանի եւ յաղբէն կենդանանայ: Սաֆրատն ի մշկին հոտոյն հիւանդանայ, ի վարդին առողջի եւ այլ այսպիսիք կան:

(Երրորդ կերպ)

Յերրորդին գործն բնութեամբ կոչի եւ զեղեղանն իմանալի գործն, որպէս աստուածային արարչութեան արուեստին զործ բնութեան, զոր ի մարմին ներդրած է նմա հոգի կոչեն. եւ զոր յաշխարհս խելք և ի բուսա-

կանքն հոգի բուսոց կոչեն, և զոր առ մարդիկ՝ հոգի մարդկան կոչեն, վասն որոյ զնա հոգի ընդհանուր կոչեն:

[Բ. Հոգին արտագեղական աստիճանաւորումին մէջ]

- 101ա Գիտել պարտ է, զի առաջին շարժումն ֆալաքին եւ աստեղացն ազդելով յերկիր ընդհանուր հոգոյն զօրութենէ զամենայն որ ի տեսակ բերէ, նմա հոգի մասնաւոր կոչեն եւ այս կերպս, որ ի տես երեկ[ք՞] կամ ի մայտանէ է, կամ ի բուսոց, կամ ի կենդանեաց և զէտոց զգանազանութիւն. ասացաք յառաջդ և մայտաննոյն և բուսոցն և կենդանեացն ամենայնի
- 101բ Ժամանակ||կայ, որ դարձ սկիզբն ամենայն բարեաց, որպէս միակն ամենայն համարոց, նույնպէս եւ խելքն սկիզբն եւ պատճառ է այլ իրոյն, որպէս միակն թուոցն: Եւ որպէս համարն երեքին յետոյ է երկուքին, նոյնպէս հոգին հետ խելացն է: Զորրորդն՝ որպէս նիւթն, հինգերորդն՝ որպէս բնութիւնն, վեցերորդն՝ որպէս պարզ մարմինն, եւթներորդն՝ որպէս ֆալաքնին, ութներորդն՝ որպէս տարերքն, իններորդն՝ որպէս ծնունդքն, ինն վերջք է միակացն եւ ծնունդն էութեան: Եւ մատչաննին որպէս տասներորդն, բոյսքն որպէս հարիւրերորդն, կենդանիքն որպէս հազրնին: Համարն զուգ լինի եւ ֆարտ, զորդ եւ քսուր, բնութիւն հոգեւոր կենացն ֆարտն եւ մարմնաւորին զուգն, զորդն ըստ բնութեան հոգեւոր բարեացն, քսուրն մարմնաւորիս: Ի ֆակաքնոյն յաւելուլ ու պակասել լինելութիւն ու ապականութիւն:

[Գ. Մարդուն «նոգեւոր զօրութիւնները»]

- 105ա Եւ երեք զօրութիւն կայ ի մարդն բանականն. ի լերդն եւ յաղիքն կենդանականն, ի սիրտն բանական, յուղեղն, ուր եւ հոտոտելիքն եւ բանական: Եւթն է քարշողականն եւ||այլն. քարշողն այն է, որ կերակրոյն որ ի սոսորդն ի վայր անցնիլն քարշէ զիւր յինքն երկու պահօղն, որ յիջանելն ի ստամոքն պահէ մինչ ամենայն տեղն զիւր քարշէ. երեք հալօղն, որ հալի եւ արիւն դառնայ, շորս բաժանականն յամենայն մարմին սրփռելով, որ ամէն անգամ յինքն դարձնէ, եւթն յաղթութիւն, որ մայտայնն յաղթէ ի վերա ամենայնի, վեց ծնրնդականն, որ յաղեցն յամենայն մարմին, որ մարմին լինի եւթն, չկայրէ յիստակ բան վասն եւթնեանս: Ապա հոգեւոր զօրութիւնն երեք է. առաջին՝ զգայութիւն, այլ չկայ ի սիրտն, Արեգակն զօրութիւն կուտայ յաղիքն, Մուշթարին ի սաղն, Լուսին ի ստամոքն, եւ յերիկամն՝ Զօհրայն, ի տամաղն՝ Յօտարիտն, ի լեղին՝ Մառեխն: Եւ այսպէս մարդն փոքր աշխարհ է. ոսկորքն, լերունքն եւ գետին՝ երկնին, ի ծովէ գետերն, տամաղն ու կուրծքն՝ ֆալաքնին:
- 107ա Եւ մարդ, որ է փոքր աշխարհ, զգայական զօրութեամբքն առնու, որ են աչք երկու, ականջք երկու, քթափողք, բերան, ի սոցանէ սփրոին զօրութիւնն յամենայն յանդամսն: Նախ ի կուրծսն, ուր սրտամրտական է. անտի ի սիրտն եւ ի ստամոքն, ի թոքն եւ ի լերթն, եւ յերիկամունսն
- 107բ երկու||եւ ի փայծեղն եւ յայլ մարմին, եւ զօրութիւնքս այս երկու են. նաւսն ի վեր բարձրանայ եւ թանձր ի վայր իջանէ եւ զօրութիւն նախախնամական է, որ բաժանի յամենայն անդամսն:

[IV ԲՆԱՓՈՒԼԻՍՈՓԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ]

[Ա. «Մարմինները» — Երկնային շարժումներ — Լինելութիւն]

- 92ա Մարմին երկայնութիւն եւ խորութիւն եւ բարձրութիւն է, տարերք է՝ եւ պարզ ճօհար է: Այսպէս իմացիր զամենայն մարմին ֆալաքնոյն, որ

է տեսակացեալ ի նիւթոյ: Եւ նիւթն բնաւ բնութիւն շունի, զի ունէր՝ կամ պակասէր կ[ա]մ աւիրէր:

94բ Եօթն են մարմինք, որ ի ներքոյ լուսնին երկնիցն են, շորս տարերք եւ կենդանիք, բոյսք եւ մատանին. եւ առաջին սոցա է հուրն, որ իւր երկրորդ շկա եւ սեռ է արեգակն: Չորս տարերքս սեռ խաս կոչին, եւ կենդանիք եւ բոյս եւ մայտանինն մասնաւորք կոչին, եւ այս եօթն մայրեր կոչին եւ խառնուածն սոցա ի նիւթոյ եւ ի տեսակէ եւ եօթս նոցայ մարմին:

95ա Շառաւիղն է լուսոյն պատկեր, ջերմութիւնն՝ հրոյն, եւ գիճութիւն՝ ջրոյն, եւ տաքութիւն եւ հովութիւնն եւ շարժումն՝ օդոյն, հովութիւն եւ՝ շոքութիւն՝ հողն. սոցա տարերքս պատահմամբ տեսակ ընդունին եւ ոչ մնացական, այլ փոփոխական, որպէս ջուրն, որ ջերմանայ, եւ հողն տաքանայ եւ այլ այսպիսիք. օդն ցրտանայ: Եւ այսպէս լինի երկու տեսակ՝ մինն հաստատուն եւ մին ոչ. եւ հաստատունն այն լինի, որ թէ խափանի՝ մարմին խափանի. եւ այն պարզ ճօհար կոչի մարմնոյն, որ ճօհարն, որ ջրախառնած է, հետ մարմնոյն զինքն հաստատուն կու պահէ: Ապակատարե[ա]լ տեսակն այն է, որ երկայնութիւն եւ լայնութիւն եւ խորութիւն ունի, մարմինն գոյն եւ հոտ եւ համ, եւ որ թապաղ լինի տեսակին, որպէս հրոյն շարժիլն եւ տաքութիւն թապաղ է շարժելոյն եւ շոքութիւն տաքութեանն նոյնպէս եւ այլ տարերացն: Ապա լինե-

95բ լութիւն տարերարցն նիւթ եւ տեսակ լինի, որպէս լինելութիւն հրոյն ի ֆալաքին շարժելոյն, եւ օդն իւր նիւթոյն լինի. եւ շարժումն ֆալաքին պատճառք է հրոյ գործոյն. յանցանել հրոյն իւր հաստատուն տեսակն պատլի եւ օդ լինի: Եւ յորժամ օդն վասն հեռանալոյ արեգական փոփոխումն ընդունի՝ ջուր լինի եւ ի ջրին մարքազն գայ: Եւ ջուրն յորժամ փոխի իւր կերպէն, որ է գէշն, յերկար ժամանակ պլօր լինի կամ յակունդ եւ յաւելնալոյ գետնոյս գիջութեան՝ սնդիկ լինի, աղ, զաճ ու շ[ի]պ լինի եւ յայսմի նման. եւ ի դաշտն, ուր արեգակն ի վերայ անցանի ժամանակ՝ յիւրմէ յակունդ գայ, եւ թէ Հրատին գրլուխն ընկեր լինի՝ պեճատա գայ, Եւ թէ Հրատին թարպեղ հայեցք ունենայ՝ կարմիր աղ գայ, թէ ի Լուսաբերն լինի՝ պլօր գայ, թէ ի Լուսնթագն՝ զլուխսն ամթ լինի եւ Երեւակն թաթլիթ եւ թասդիս լինի, նա ավմասն գայ. թէ սամթուսին ընկեր լի-

96ա նի, լլգմրութ գայ: Եւ այսպէս ամէն ինչ, որ ի զօրութենէ ի գործ գայ, յաստեղաց շարժմանէն լինին:

Նոյնպէս եւ բոյսքն յերկու պատճառէ լինին՝ կամ ի սերմէ, կամ ինքնաբոյս՝ ի ջրէն եւ ի հողէն եւ յարեգական շարժմանէն է. եւ յընկերութենէ աստեղացն եւ ֆալաքին եւ տարերացն լինի ամենայն կենդանիք և բոյսք եւ մատանին...

### [Բ. Ապականութիւն եւ իր տեսակները]

96ա ...Նոյնպէս եւ փոփոխումն լինի, որ է ապականութիւն, որ ապականի տեսակն, որպէս աղն ի հողոյն եւ ի ջրէն է, յորժամ փոխի իր տեսակէն, զոր ապականութիւն կոչեն, իր գիջութիւն յօդիցն մարքազն ելնէ, եւ օդն այլ պատուական է քան զաղն:

Իւ հողոյն յաւելուածն ի հողմն մնա եւ այս աչաց տեսեալ եղեւ, որ աղն, յորժամ զհրոյն տաքութիւն տեսանէ, օդ լինի: Այսպէս լինին եւ այլ մարմնոցն ապականումն յիւր տեսակէն:

96բ Իսկ պարզ ճօհարին եւ նիւթոյն ոչ լինի բնաւ՝ ապականութիւնն: Այսչափ



վասն լինելութեան եւ ապականութեան:

(Տեսակաները)

Գիտացիր որ ապականութիւնքն, որ ի ներքոյ լուսնին ֆալաքին են, եւթն ազգ են, մին ի փոփոխմանէ տարերացն է՝ ի հոռոյն յօղն, յօղոյն ի մեզ, ի մեզանէ ի հողն: Եւ այսպէս դարձեալ կրպնի ի հողոյն ի մեզ, ի մենէ յօղն, յօղոյն ի հուրն: Եւ երկրորդն այն է, որ յօղն ի տես գայ, որ ի վերին ասղմանէն ասացաք:

— Երրորդն՝ բոյսքն եւ տունկքն եւ ամենայն մարմին, որ աղպէտ տա: — Չորրորդ կենդանիքն են եւ ամենայն ինչ, որ ի ներքոյ լուսնիս ֆալաքին են, որ ի լինելութիւն գայ, երեք պատճառաւ լինի:

Առաջին պատճառն՝ գործնականն, երկրորդ պատճառք՝ տարերքն, երրորդ՝ տեսակքն:

Արդ պատճառքն տեսականին եւ ապա պատճառք գործնականին, որ զորդ մայտաննոյն բնութեան ճօհարն է, յառաջի||շարժմանէն ի պարզ ճօհարէն, որն աֆիտն է:

[Գ. Հանգարանական ծանօթութիւններ (իբրեւ մաս բնափիլիսոփայութեան)]

97ա Եւ բազում ճօհարք մատաննուն են, որ հալին ի հոռոյ, որպէս ոսկի եւ արծաթ եւ այլն. եւ են, որ ոչ հալի, որպէս այմասն, յակունդն, յալեղն են, որ վասն թուրութեան հալին եւ բուխար լինին, որպէս աղեղն. և են, որ լոսին, եւ բուխար լինին, բաժին մի մնան, որպէս արջասպն: Եւ որ շինին հուրն, ի նոսա շքանի տալղն, եւ են փախշին՝ փախշին՝ քարիթըն, ու եւ են, որ բոյս են, որպէս մարջանն ի՝ ծովն, եւ են ի կենդանոյ, որպէս մարգարիտն: Եւ են, որ յաղբիւրէ գան, որպէս յամպարն եւ նաֆտն, զի ասեն՝ թէ ամբարն ի վերայ ջրին գայ ի ծովեզերն, նոյնպէս եւ լակն եւ լատանն ու մոմիայն, իսկ ընտիր ճօհարնին ջուրքն, որ ի մէջ երկրին, եւ քարանց, եւ լերանց, եւ քարայրնոյն ծալուելէ ի բուխարնոյն, եւ յարեգականն շողոյն կու եփի եւ բուխար լինի, զի ձմեռն ի ջերմութիւն ի ներքոյ գետնիս իջնու ի շողէն ուժուն, որպէս ի տիւն եւ ի գիշերն տեսանես, որ ցերեկն ջերմանայ օղն յարեգական ջերմութենէն եւ գիշերն ցրտանայ: Նա վասն այն ջերմութեան, որ ի քարայրնին եւ ի մէջ լերանցն եւ քարանցն դադարեալ լինի, յորժամ նեղէ, ջերմութիւնն ելանէ ի դուրս եւ ի ցրտանալն ի տեղին նստի ի գետնոյն յաւելուածէն եւ յերկար ամօք ծանրա[նայ] եւ սնդիկ լինի, քարիթ ու զոնեխ լինի, քարիթ կարմիր կամ սպիտակ, զոնեխ կարմիր կամ դեղին:

Եւ յորժամ քարիթն ու զոնեխն յայլ պաղլա լինին եւ ժիպակն այլ պաղլայ, նայ յիւրեանց կերպն կենան եւ շինէ ճուհարն, ապա թե երկուքն ի մէկ պաղլայ լինին եւ ի ժամ յղանալոյն եւ սերմանն եւ այլվար ի տեղն նստելն մէկ առ մէկ գան տարպա||ն

98ա ի տաքութիւն՝ մաղտանին զնոսա եփէ յէլմով մինչեւ ճօհար լինի, եւ թե մասն քարիթն սաֆի լինի եւ մասն սնդիկին ի պղտորութեան է եւ ի հեռութենէ եփումէն մաղտայնին միջակութիւն լինի՝ նա անտի ոսկի լինի, եւ թէ ցուրտն ի յայն տեղին շմտանէ ի ժամանակ մի, եւ թէ քրպրիթն եւ ժիպակն սուրբ լինին եւ նիսպաթն դրուստ լինի, նայ ի մէջ եփմանն ցուրտն յինքն տեղի գտանէ, արծաթ լինի, եւ թէ սնդիկն եւ քարիթն եւ նսպաթն ի բնութեան վերել լինի, ապա տաքութիւն մաղտնոյն աւելի լինի, ոսկին այրի եւ պղինձ լինի:

Եւ թէ ժիպակն զուլպա լինի եւ քարիթն մասն հողոյն՝ դրուստ լինի եւ ցուրտն ի քանն զօրանայ՝ ի նմանէ կլայեկ գայ, եւ թէ սնդիկն ուժով

լինի եւ քարիթն ի լրման յըստակ եւ լինի, ապա սակաւ եւ քարին կերպն թոյլ եւ աւազ լինի եւ ցուրտն զօրանայ, անտի տարպ լինի:

98բ Եւ թէ մասն ժիպակին ծանր լինի եւ քարիթն սպրկիկ շինի եւ ի մաղտանն ժամ մի տաքութիւն եւ ժամ մի ցրտութիւն դօրանայ, անտի երկաթ գայ:

Եւ թէ քարիթն ի վերայ ժիպակին զօրանայ եւ տաքութիւն աւելի լինի՝ անտի սուրմայ գայ եւ լինի որ մաղնիսիս գայ:

Եւ այսպէս է դիասն ամենայն մայտաննոյնիս՝ յակունդն, պլօրն եւ յաղեղն եւ որ յայսմի նման յանձրեւին ջրէն լինի եւ ի լատիֆ բուխարէն, որ ի մէջ լերանցն նստի եւ քարայրնոյն գլուխն, որ ի բաց լինին եւ, ծագ, իսկ զմարգարիտն էութիւն, որ ի ծովէն սատաֆնին ի միմեանց ծնանին:

Եւ ոմանք ասեն, թէ ի թանձր գիճութենէն ելանէ, որ ի մէջ ծովուն ժողովի: Երբ սատաֆն մեծանա ու ինքն ի ներս թանձրանա, իր մէջն կենդանի մի երեւնայ, որպէս կտոր մի միս սպիտակ ի ձգան՝ միսն ի նման եւ յինքն տահնիսթն սաֆի լատիֆ լինի: Եւ այս սատաֆն՝ այն կենդանոյն ուժովն կենդանանայ եւ շարժումն առնու, ապա ամենեւին զբերան իւր ոչ բանայ, զի թէ բանա՝ լեղի ջուր ծովուն մտանէ եւ սպանանէ զնա. ապա երբ զիւր շարժումն ի լման առնու, ի միջոյ ծովուն ի վերայ երեսանց ելնէ եւ զբերանն բանա, որ յայն գոլորշեացն, որ ի ծովէն ելեալ լինի, յիւր վերա նստի, որպէս ցօղն ի վերա խոտին եւ յեմէ մինչեւ այն կենդանին ժողովն լընուի, ապա սատաֆն զբերանն յիւ ուր ածէ եւ ի վայր երթայ ի մէջ ծովուն: Եւ այն կենդանոյն բնական տաքութիւն զցօղն, որ էառ սնուցանէ ժամանակ մի, նայ լինի որպէս սնդիկք. ապա այն կենդանին այլ ուժածանրութեան նա յիւրմէ ի դուրս հանէ, որպէս զծնունդ մարդոյ, ապա այն սնդիկքէն ի վերա սատաֆին գայ, լինի որ մէկ կտոր մնայ. լինի որ բազում լինի եւ ժամանակաւ պնդանա եւ մարգարիտ լինի պատուական քան զայլ ճօհարին: Ասեն իմաստունքն, թէ կլայեկն մօտ է յարծաթն, կլայեկն ի զըռնեխէն է եւ ի սընդկէն չէ, ի քարթէն սարպն լաւ է քան զկլայեկն եւ քան զայլ մաղտայննին մարդաշիթան, տահնաճն եւ լազուարն, փիրուզա, պէճատա եւ յամբարին քարն եւ խնդամանդն եւ որ յայս նման:

[Գ. Նիւթ եւ տեսակ]

[1. «Վասն նիւթի եւ տեսակի»]

101բ Մարմինն ամենայն յերկուց է՝ ի նիւթոյ եւ ի տեսակէ. նիւթն տեսակին ընդունօղ է: Եւ առաջին տեսակն, որ ի նիւթոյ է, երկայնութիւն եւ լայն:

102ա նութիւն եւ խորութիւն ունի, որ եւ զայլ տեսակքն ընդունի եւ զմարմինն զեռանգիւն, զքառանգիւնն եւ զայլն:

93ա Գոյացութիւն, քանակն եւ որակն նիւթ եւ տեսակ լինին միմեանց, քանակն՝ տեսակ, եւ որակն՝ նիւթ. օրինակ, շապիկն՝ տեսակ եւ կտաւն՝ նիւթ: Եւ կտաւն՝ տեսակ եւ մանածն՝ նիւթ, մանածն՝ տեսակ եւ բամբակն՝ նիւթ, բամբակն՝ տեսակ և բոյսն՝ նիւթ, բոյսն՝ տեսակ և տարերքն՝ նիւթ, տարերքն՝ տեսակ եւ մարմին իւր՝ նիւթ, մարմին՝ տեսակ առ գոյացութիւնն որ է ճաւհար, եւ գոյացութիւնն իւր՝ նիւթ. եւ ճօհարն պարզ պատկեր է ամենայնի. եւ այսպէս սկսեալ յօտիցն մինչ ի բարձրութիւն եւ ըստ այլում օրինակի:

Զինչ ձեւ որ ի գոյութիւնն ի տես գայ, որ է ճօհարն, անտեսակ կոչի, եւ տեսակովն լինի բաժանումն էակացս: Եւ տեսակն, որ ի միոյ նիւթոյ

լինի, բազում են, եւ նիւթն մի, որպէս յերկաթոյ եւ թուր, ե՛ւ դանակ, եւ բազում այլ իրս:

## [2. Նիւթը եւ իր տեսակները արտազեղական մակարդակի վրայ]

93բ Եւ նիւթն շորս ազգք լինին:

— Առաջին, նիւթ արհեստից, որպէս փայտ հիւսան եւ երկաթն դարբնի:

— Երկրորդն, նիւթ բնութեան կոշի, որպէս շորս տարերբք եւ զամենայն ինչ, որ ի ներքոյ լուսնիս են: Յայս նիւթէս տեսականան մինչ ի մարգազ գետնոյս մայտայնինն եւ բոյսքն եւ կենդանիքն, եւ որ ի նոցունցն լինին եւ յապականիլ խառնուածոյ, այլ ի նոյն տարերսն դառնան՝ հուրն

94ա առ հուր եւ յայլսն ամենայն: Եւ այն||զօրութիւն պարզ ճօհար է, որ է առաջին շարժումն:

— Երրորդն, նիւթ ընթանուր կոշին. այսպէս, ֆալաքնին եւ աստեղք եւ որ ինչ ի նոսա կան, ուստի ամենայն աշխարհի շարախառնութիւն եւ հաւասարութիւն:

— Չորրորդն, զոր նիւթ առաջին կոշին, որ ճօհար պարզ իմանալի, յոր ոչ հասանի զգայութիւն, ուստի եւ սկիզբն ամենայն իրաց ի նման է եւ ինքն տեսակ է գոյացութեան, որ է ճօհարն, եւ ի նմայ քանակ եւ որակ ոչ երեւի, այլ քանակն եւ որակն պատկերնի են պարզ, այսինքն տեսակ, որպէս ասացաւ:

Եւ առցուք օրինակ զոսկին կամ զտարպն, կամ զաճն եւ զյակունդն, որ ոսկոյն գիճութիւն, որ ի հողոյն եւ ի սնդկէն, որ ժիպակն հաստատեալ է, զոր հուրն ոչ կարէ բաժանել եւ հողն եւ դաւլոն ժամանակիս ոչ ապականէ:

Իսկ զտարպն ապականէ եւ զիւր տահնիաթն յիր մարգազն հասցնէ. եւ

94բ մասունք սնդկին, որ ի հողոյն է, զիւր դարձնի հողն տայ, զոր մարտասանք կոշեն: Նոյն յիմացիր զյակունդն եւ զաճն: Բայց բարի է այն ճօհարն, որ դաւլոն զիւր տեսակն ի նիւթէն չկարէ փոխել, որպէս բուսականքն եւ կենդանիքն՝ զի յայրելն ծառին եւ յապակունելն կենդանոյն դառայ իւր նիւթսն եւ հուրն զհուրն ոչ այրէ, բայց երբ անցնի յիր մարքազն, երթայ ի յեթերն. եւ այս մաթալս զգայութեամբ է:

## [3. Պատճառակաճութիւն]

106ա Եւ ամենայն որ յաշխարհի կայ՝ սկիզբն ունի եւ վախճան. սկիզբն գոյութիւն է ամենայնի եւ վախճանն քակտումն է մասանցն: Եւ գոյութեամբ մի են եւ մասամբ բազումք, եւ բաժանումն ի մարմնոյն մասուն անկան եւ միաւորութիւն ի հոգիսն, զի հոգիքն նուրբ են, նոյնպէս եւ խառնուածն նրբարար, եւ մարմինն թանձր է: Նոյնպէս եւ մասանցն խառնուածն. թէպէտ խառնուածն թանձր է, այլ մասանցն ժող[ով]ումն նրբագոյն է զօրութեամբ. եւ կազմութեան գոյութեան յերկու պատճառաց է:

— Առաջին է նիւթն:

— Երկրորդն՝ որպէս ոսկէզ[որ]ժին նիւթ է ոսկին կամ արծաթն, եւ

105բ նիւթին պատճառ արուեստն, որ առնէ||մայտանի եւ թէ վասն որոյ վասն մատին:

Եւ դարձեալ, ամենայն գոյացութիւն շորս սահմանով է.

— ...պատճառն եւ նիւթն, ներգործութիւն եւ գործօղն:

Եւ թէ չէր նիւթն, ուստի՞ լինէր գոյացութիւնսն. եւ թէ չէր գոյ[աց]ութիւն,

ուստի էր զօրութիւն, եւ թէ ոչ էր զօրութիւն, ուստի էր ներգործութիւն.  
վասն որոյ սօքօք գոյացան սամենայն արարածք:

[ Ե. Արտագեղման տեսութիւն ]

102ա Նիւթն առաջին պատճառ է հոգոյն եւ խելքն առաջին ճօհար է յաստուծոյ, եւ խելքն զնաւան ի տես երեք, եւ նաւան ճօհար մի ի տես երեք, որ երկայնութեամբ եւ լայնութեամբ եւ խորութեամբ լինի, խելքն գործ յաստուծոյ, նաֆսն գործի գործոցն աստուծոյ, որպէս կէտն որ մասն շունի, այսպէս իմասցիս անզօրինակն աստուած, ի կէտէն զիծն երկայնի, որպէս նաֆսն ի խելացն եւ որպէս ի գծէն մարմինն է, որպէս նիւթն ի նաֆսէն եւ օրինակ բոլոր հաստատ մարմնոյն, որպէս կերպն եւ հետ մուսլախ մարմնոյն պարունակող ֆալաքն եւ անտի ի վերուստ հաստատութիւնն աստեղացն եւ ի մինչ ի գետն ի սա մարքազն բեր. եւ ապա ի մայտանին, ի բոյսքն, ի կենդանիքն:

Զինչ առ մարդիկ իջեալ է, յընթանուր հոգւոյն ճօհար մի լինի, եւ ի հոգոյն ճօհարէն զօրութիւն մի լինի ի խելացն ի զօրութենէն, որ ի ցայտմանէ խելացն է, որ ի հոգոյն իջեալ է:

Աւրինակ այսպէս, բոլոր մի ի պլօրէ ի գետինն դիր եւ կթղայ մի բօլորէ յիւր վերա եւ բոլոր կթղային կրակ արա. հուրն ի կթղայն տես ցուցանէ եւ կթղայն ի պլօրն, ապա ի կթղայն երկու զօրութիւն լինի, զոր էառ ի լուսոյ հոյն եւ մին՝ զոր անցոյց ի պլօրն, եւ պլօրն բոլոր զերկու զօրութիւն ընդունին: Եւ արդ է հուրն՝ խելքն, կթղայն՝ յընթանուր հոգին, պլօրն՝ մարդիկ. եւ զի պլօրն երկու զօրութիւն ունի, մարդիկ երկու զօրութիւն՝ զխելքն եւ զհոգին. խելքն ի հոգին է, որպէս լոյսն ի հոսոյն: Այլ օրինակ՝ արեգակն յապակէ կուպայ մի ցայթէ շաղսն ի մէջ կուպային, լինի արեգակ ի խելացն ի մանգիլն կուպայն յընթանուր հոգոյն շաղսն մարդկան. ապա մարդիկ երկու ընկալան զօրութիւն, մին զարեգակն ի մէջ կուպային եւ մին՝ վասն ապակոյն, զոր վասն ապակոյն՝

103ա րեգակն ի մէջ կուպային եւ մին՝ վասն ապակոյն, զոր վասն ապակոյն՝ այն օրինակ հոգոյն եւ լոյս արեգականն օրինակ խելացն: Եւ է խելքն անուն մի եւ բազում այլ իրաց պատճառ, որպէս սահմանեն խելքն զօրութիւն մի է, որ նովա բաժինք առնեն եւ ընտրեն զբարին եւ [ փախչին ] ի շարէն. խելքն զօրութիւն է, որ զառաջադրե[ա]լն իր մեկնէ, որ ի տարակուսանացն ելնէ, որ զօգտակարն ի ձեռն բերէ: Եւ այլ ասեն խելքն էութիւն է ի մարդիկ հաճելի, որ նովա խօս[ի] եւ շարժի եւ ընտրէ. բաժանի խելքն յերկու՝ տեսական եւ ի գործական տեսական, ի զօրութիւն, ի հոգին, որպիսութեամբ զընթանրականն իմանալ եւ գործն կատարումն է հոգւոյն, որ կերպ որ ուզէ ի գործ բերէ: Եւ այլ ասեն խելքն գործաւոր ճօհար է եւ ամենայն իրաց կերպ յինքն է: Սահման նաֆսին անուն է ընկերութեամբ, յոր մարդ եւ կենդանիք եւ բոյսք ընկերք են. եւ այլ մարդիկ եւ հրեշտակք ընկերք են:

103բ Այլ նաֆս ճօհար է յետ մարմնոյն եւ շարժող է մարմնոյն եւ տա բանաւորութիւն, ընտրողութիւն եւ կամ գործով, կամ զօրութեամբ. զխելքն եւ զնաֆսն յընթանուր կոչեն, զի այն հասիցն թտպրող են:

99բ Գիտելի է, զի ի բնութենէն, որ ընթանուր հոգի է, ընդ ամենայն պարունական երկնի մինչ ի գետնիս մարքազն իջանէ եւ զամենայն շարժէ ի գոյութիւն եւ ի գործ. զի ասեն, թէ լեղին շէր ի մարդն եւ յայլ կենդանիսն, զսաֆրայն յաղեցն շառնոյր, նայ զաղիքն այրէր, եւ զի ստամոքն նորա ուժովն զկերակուրն հալէ ու զխլտն, որ ի ստամոքացն վերա կու վայթի, որ թէ շէր՝ հում մնայր կերակուրն եւ խլտն եւ ապա-

կանէր, եւ թէ չէր Զօհալն՝ նայ չէր փայծաղն, զոր զչոր սաւտայն յաղեցն ի դուրս կու քաշէ, որ թէ չլինէր այս, աղիքն ի շոր սաւտային  
100ա զօրու||թենէն շորնայր եւ կենդանութիւն շմնար: Եւ այսպէս, թէ Երեւակն չկարէ, հետ ծերութեան մահ չկայր:

Եւ մատաննին փոքրերն պատուականն յակունդն է եւ ի կենդանիքն փոքր ճճիքն ժըժմունքն, եւ ի կենդանիսն պատուական մարդն, ի բոյսերն փոքր ինքնարոյսք են եւ մեծ եւ պատուական ամբրաւենին՝ բուսոցն տեսակն, որպէս կենդանի է, որ զգլուխն կտրես՝ մեռանի, եւ թէ բեւեռ մի ի սիրտն զարկնեն՝ մեռանի, եւ ամենայն վերջնոցն առաջի յաստիճանէն իջանի, սկսեալ ի վերնական դասուց հրեշտակացն:

**V. ՏԻԵԶԵՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ—ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ—**

[Այն մասին թէ՛ «Աշխարհը մեծ կենդանի» մըն է եւ մարդը՝ «փոքր աշխարհ»]

106ա Երեւելի արարածքս մեծ աշխարհ ասի եւ մարդ փոքր աշխարհ, եւ որպէս մարդ հոգի է եւ մարմին, նոյնպէս աշխարհ. եւ զոր ինչ կայ ի մեծ աշխարհս՝ մարմնեղէն եւ հոգեղէն, կայուն եւ գնայուն, գոյացութիւն եւ պատահումն, շոր եւ դալար, ամենայն կայ եւ ի փոքր աշխարհ եւ փոքրովս մեծն իմանին՝

Դարձեալ սկիզբն ամենայն իրաց գործաւորն է, եւ գործաւորն յայտնէ  
106բ զներգործելն, եւ ներգործելն՝ <զներգործելն> զներգործելոյն զոհութիւնն, եւ զոհութիւն յայտնէ զորակութիւն: Եւ գործն շարժիլ ասէ, եւ շարժելն ջերմային է եւ ջերմն արոյ է եւ գործքն անշարժ է, եւ անանշարժն պաղ է, եւ պաղն իգական, եւ պաղութիւն եւ ջերմութիւն ծնաւ զշորութիւն եւ զգիճութիւն, զի ծնաւ շորութիւն զպաղութիւն եւ զիջութիւն զտաքութիւն. եւ եղեն շորս տարերք եւ մայր, որ ծնան զմեծ աշխարհս եւ զփոքր, մեծ||աշխարհիս մարմին է երկինք եւ երկիր, զլուսն է

107ա երկինքն եւ ոտք է երկիրս. եւ են կազմե[ա]լ ի շորից տարերաց եւ եւթն մոլորականք եւ երկոտասան կենդանակերպքն խառնեն զօրութեամբ եւ բաժանին ներգործութեամբ: Եւ վերին երկինքն զլուսն է, եւ ի գլխոյն բաժանին երակքն, որ տան զօրութիւն հոգւոյն, եւ երկոտասան կենդանակերպքն եւ կուրծքն եւ փորն, ուստի ելանեն այլ զօրութիւնք եւ սրփոռն յանդամսն որպէս մոլորականքն, որ յազդեն յաշխարհս որպէս երակօք մարմնոյ. եւ այսպէս ի վերին երկինիցն ի գլխոյ եւ ի փորոյն կենդանակերպիցն եւ ի մոլորականացն ազդեն զօրութիւն իբր յանդամս:

104ա Ասեն թէ աշխարհ որպէս մեծ կենդանի է, եւ թէ բազում զօրութիւն կայ ի կենդանին, նոյնպէս եւ յաշխարհս քարշողական, ըմբռնող, այլայլող եւ այլն: Եւ ըմբռնողն է այսպէս. իրք որ կարէ պատկեր առնուլ եւ ըմբռնել, որպէս ջուրն ոչ կարէ պատկեր առնուլ, մինչ ի հող խառնի եւ բնութիւն է բուսոցն, որ ի վայրացն զգիճութիւն յինքն||քարշէ: Նոյնպէս

104բ օդն զիր նման օդն զհաւան ի միջոյ լերանցն քարշէ: Որ թէ լերանց զլուսն ի ծածուկ չէր, հողմն ի դուս ելանէր: Որպէս ստամոքն զկերակուրն քարշէ եւ ըմբռնէ, եւ տունկբ եւ բոյսք՝ զջուր, նոյնպէս եւ երկիր լինի. ի մայտաննին քարշէ եւ շինէ: Եւ է աշխարհս մեծ կենդանի եւ գետինս ի միջոցի որպէս սիրտ, եւ գետք եւ ջուրք որպէս երակքն եւ այլ մանր կենդանիքն յայս մեծ կենդանոյ փորս կան անբաւք: Աշխարհս կենդանի է մի մեծ, եւթն աստեղքն յինքն եւթն անդամ է, որ սիրտ ու աղիք, ստամոք, տամաղն, փայծեղն, թոքն, երիկամունքն եւ գետինս ի մէջ այս կենդանոյս. եւ կենդանիք, որ ի գետինս են և զեռունք, որպէս

խլտ, որ ի կենդանին լինի, եւ ազդումն որպէս ի վերուստ ի ֆալաքն լինի, ապա ի տարերքն, ապա ի բոյսքն, ապա ի մաղտանին. ամէն աստղ  
105ա յերկինս իւրն բաժին կայ, որպէս յայլ տեղ յիշած է, եւ շորս տարերացս  
Թտարող բնութիւն է, որ սկիզբն է առաջին շարժմանն: Եւ երկնիւ եւ  
աստեղօքն յայս շորս տարերքս հասցնէ:

Արդ՝ բնութիւն ի նմանութիւն հիւսան, ֆալաքն որպէս ձեռք, տարերքն  
որպէս փայտ եւ երկաթ, եւ որ ինչ ի նոցանէ լինի՝ աթոռ եւ թուր, այսպէս  
կենդանիք, ու բոյսք ու մայտանն: Եւ որպէս ֆալաքն է յաշխարհս շար-  
ժող հոգին եւ ըստ շորից տարերացն, շորս խլտն, եւ որպէս ի գետինս  
բոյսք եւ մատան՝ ի մարդն տեսանի ամենայն, որպէս ասացած է: Եւ  
այսպէս զգլխոյն փորուածքն զգայարանացն դիրքն, որ սլատեհուոր է  
ամենայն եւ կամ շորս որպէս վրան մի երկնին ու շարիաննին եւ ոս-  
կրտին որպէս սիւն է: Եւ խար կայ ի փայտերն եւ բանաւոր հոգին տէր  
եւ բնակիչ:

108ա Եւ այսպէս նմանութիւն մեծ աշխարհի եւ փոքրին:

Գլուխն է խոյն, Յուլն՝ աշքն, ուսք եւ ձեռեր՝ Եկաւորն, կուրծքն եւ կողն՝  
Խեցգետին, փորն՝ Առիւծն, պորտն եւ մասանքն՝ կոյսն, երկու բուրբն եւ  
ժածուկ անդամքն՝ Կարիճն, երկու բարձքն՝ Աղեղնաւորին, երկու ծունկն  
108բ Այծեղջիկ՝ Լրին, երկու սրունքն՝ Զրհոսին, երկու թագ ոտիցն՝ Զուկն: Այս-  
պէս համեմատին անդամք մեծ աշխարհիս ընդ փոքուն, որ է մարդն:  
Նոյնպէս ունի փոքր աշխարհ զմեծին բնութիւնն՝ գտաքութիւն եւ զպա-  
ղութիւն, զշորութիւն եւ զգիճութիւն, ջերմ է հուրն, որ է խարտեղ մաղ-  
ցըն, գիճութիւն օդն ի պաղութենէ, որ է ջուրն, պղզամն ի շորութենէն,  
որ է հողն, սաւտայն, որ է սեւ մաղցն եւ ի գիճութենէն, որ օդն արիւնն:  
Եւ մոլորականքն ի զգայականսն նմանին այսպէս:

Աջ ականջն Զօհալն է, ձախն՝ Մուշթարին, աջ ակն՝ Շամս, ձախն՝ Ղա-  
մեր: Աջ քրթափողն՝ Օտարիտ, ձախն՝ Զօհրէ, բերունն՝ Մառեխ: Եւ այս  
զգայականքս ի գլուխն է, որ նման է բարձր երկնիցն, եւ են մոլորական-  
քս իբր զօրութիւն հոգոյն: Նոյն զօրութիւն են եւ ի կուրծսն եւ ի փո-  
րոտիսն, եւ են որպէս երկոտասան կենդանակերպքն ի մէջ երկնի եւ  
երկրի: Այսպէս կուրծքն եւ փորն ի մէջ գլխոյն եւ ոտիցն: Եւ են նման

109ա եւթն մոլորականացն զուղն, լեարդն, թոքն, փայծեղն, երկու երկկա-  
մունքն եւ լեղին, գլուխն է խոյն, յորում փառաւորութիւն Արեգական,  
նոյնպէս զուղն կայարանք Արեգակն է: Պարանոցն Յուլն, ի նմայ փա-  
ռաւորի Լուսին, նոյնպէս հոշակն եւ թոքն ճանապարհ շնչոյն է Լուսինն,  
կուրծքն Խեցգետին, յոր փառաւորի Լուսնթագն: Նոյնպէս սիրտն, որ ի  
մէջ կրծիցն կայ, Լուսնթագին զօրութիւն հոգէկան: Եւ սոքայ են միջակ  
բնութեամբ, լեարդն Հրատին եւ հրային, լեղին Փայլածուին եւ ջրային,  
երկկամունքն Լուսաբերին եւ հողմային, փայծեղն Ծրեակին եւ հողային:  
Ատ մտացն եւ խելացն հոգիք արեգակ է եւ է յուղեղն եւ անուն սուրբ  
Թօրոս, թափանցիկ հոգին եւ շունչն անուանի պրմտուս, որ է ի թոքն եւ

109բ ի թռչափողն: Եւ հոգի հեզութեան եւ խելաց եւ լուսման եւ մըտացն  
անուանի իմատրուս, որ է Լուսնթագին եւ է ի սիրտն: Սըրտմըտականն  
եւ պատերազմի հոգիքն անուանին հեմատուս, որ է ի մասին  
Հրատին, եւ կայարան լեարդն: Հոգիք նախանձու եւ խափէու-  
թեան, կեղծաւորութեան եւ շար խորհրդոց անուանին պլմատուս  
եւ են ի Փայլածուէն եւ կայարան լեղին, հոգիք տրտմութեան եւ սգոյ  
եւ ցնորից անուանին պատմոս եւ են յԾրեակէն եւ կայարանք փայ-  
ծեղն: Իսկ հոգիք ցանկութեան եւ զգայութեան եւ ստամոքաց անուանին  
քինատուս եւ են ի Լուսաբերէն եւ կայարանք երկկամունքն: Եւ սոքա

խառնուած ունին ընդ միմիանս: Եւ են եւթն երակ յուղեղն, որոպք Արե-  
գական հոգիք տարածին ընդ մարմին, ի սիրտն եւթն երակ, որ ունի ի  
Լուսնթագէն, հոգի զօրութեան եւ սփռեն ի լեարդն, եւթն երակ ի Հրա-  
110ա տէն զհոգոյ զօրութիւնն ունին եւ բղխեն ի լեղին, եւթն երակ զօրու-  
թիւն հոգոյ ի Փայլածուէն ունին եւ բղխեն եւ զօրացուցանեն: Եւ յերի-  
կամունսն եւթն եւ զօրութիւն ի Լուսաբերէն, որ բխեն եւ ի փայծեղն,  
եւթն ունին յԾրեւակէն հոգոյ զօրութիւն եւ այլ գրեալ էր այս երակաց  
անուանք:

Եւ այս երակս յայլ բազումս բաժանին եւ սօքօք ճանաչի առողջութիւն  
եւ տկարութիւն եւ տրտմութիւն եւ ուրախութիւն. եւ այս ի կենդանա-  
կերպիցն եւ ի մոլորականացն ունի զազդումն զօրութեան. ի մարդն  
ԳՃԿ. (360) ոսկր է, ի Լուսնթագէն է, եւթնհարիւր ջիլ է, եւ է Լուսաբե-  
րին, եւթնհարիւր երակ է եւ է զօրութիւն ի Հրատէն, ՇՂ. (590) կաթ  
արին, կաթն մթխալ մի եւ հոգի զօրութեան ի Փայլածուէն, իննսուն վեց  
հազար մազ է ի մարմինն եւ զօրութիւն յԾրեւակէն, ՊԻ. (820) մթղալ  
ճրագուն է եւ հոգի զօրութեան յԱրեգակնէն, ՅԿ. (360) մղթալ (մըղ-  
110բ թա՞լ) ղուղն զօրութեան՝ եւ հոգի [ի] Լուսնէն: Եւ այսպէս այս անդամքս  
ունին զօրութիւն ի կենդանակերպիցն եւ մոլորականացն եւ որպէս լոյս  
արեգական զաշխարհս լուսաւորէ սոքա զանդամս մարմնոյ փոքր աշ-  
խարհի:

Արար աստուած զսիրտն, որպէս երկոտանի. զլերթն, որպէս շորքոտ[ա]-  
նի. թոքն, որպէս թուղն. փայծեղն, որպէս ջրային կենդանիք. զերի-  
կամունսն որպէս ցամաքային սողունս: Եւ դարձեալ մարմին մարդուն  
նման է հողոյն: Արտասունքն ի ջուրն, երակքն ի քարանցն, երակսն,  
ոսկերքն ի լերինս, մազն բուսոց եւ տնկից, լերկ տեղիսն, որ ի մար-  
մինն՝ լերկ գետնոցն եւ դաշտաց. ջանք մարդոյն նման Հրատին, երեսն՝  
արեւելք, ծոծորակն՝ արեւմուտք: Աջ ձեռն՝ հարաւ, ձախն հիւսիս: Եւ  
այսպէս փոքր աշխարհ ունի զմեծին ե՛ւ զզօրութիւն, ե՛ւ զքնութիւն, ե՛ւ  
զերգործութիւ, ե՛ւ զմացականութիւն:

111ա Այլ շրջագայութիւն երկնից եւ կենդանակերպքն եւ որպէս մոլորա-  
կանքն, երբ են հաւասար՝ ընթանան, եւ եղի հակա[ռակ]: Նոյնպէս եր-  
բեմն փառօք եւ իմաստութեամբ եւ գեղեցկութեամբ յաջողի մարմնոյն  
յանդամոց եւ եղի տառապանօք, ցաւօք, հեծութեամբ: Եւ կենդանիք, որ  
մեծ աշխարհիս կան եւ ի փոքրս ի մարդն, որք յորպիսութենէ կենդա-  
նակերպիցըն եւ մոլորականացն պէսպէս շարժմանէն ի պղտոր նիւթոյ  
յաջ եւ ի ձախ, ցած եւ բարձր եւ ի տառապանաց շարժմանէն, որք  
նոյնպէս են. եւ անասունքն խոնարհ գլխով եւ ոչ որպէս բանականքս ի  
շնորհս, ի խելքս եւ իմաստս եւ ի գեղեցկութիւնս, այլ կենդանիք,  
զազանք եւ անասունք:

107բ Եւ են երկոտասան կենդանակերպքն ըստ շորից տարերցս-Խոյն, Առիւծն,  
Աղեղնաւորն հրային, Յուլն, Կոյսն, Այծեղջիւրն հողային, Եկաւորն,  
Կշեռն, Զրհոսն օդային, Խեցգետինն, Կարիճն, Զուկն ջրային: Եւ են  
սոքայ թուպրոզ եւթն մոլորականացն: Ծրեք են, միջուկ են, հաւասար  
են կենդանակերպիցն բնութեան, եւ շորս ոչ, այլ աւելի պակաս: Եւ մի-  
ջակք եւ հաւասարք են Արեգակն, Լուսին, Լուսնթագն: Եւ որ աւելի պա-  
կաս են. Զօհալն, Մառիխն, Զօհրայն, Օտարիտն: Ծրեւակն հողային,  
Հրատն հրային, Լուսաբերն հողմային, Փայլածուն ջրային եւ Լուսնթագն:  
Այս հինգս ամէն երկու տուն ունին, իսկ Արեգակն եւ Լուսին մի տուն

108ա ունին եւ բարձրութիւն եւ ցածութիւն: Խոյն հրային եւ Կարիճն ջրա-  
յին եւ են տուն Հրատին, Յուլն եւ Կշեռն հողային եւ հողմային՝ տուն

Լուսաբերին, Յկաւորն եւ Կոյան հողմային եւ հողային՝ տուն Փայլա-  
ծունին, Խեցգետինն ջրային՝ տուն Լուսնին: Առիւծն հրային՝ տուն Արե-  
գական, Աղեղնաւորն եւ Զուկն հրային եւ ջրային՝ տուն Լուսնթագին:  
Այծեղջիւրն եւ Զրհոսն հողային եւ հողմային՝ տուն Երեւակին, Վիշապն  
հակառակ է եւթն մորթականացն եւ զօրաւոր ի վերա եւթնեացն: Եւ  
իւր փառաւորութիւն եւ բարձրութիւն եւ ցածրութիւն եւ կենդանակերպսն  
գրած է:

[Եւ Քրիստոսի՝ տգօղին ամենայն իմաստնոյ՝ փառք: Եւ զանպիտան  
գրական յիշեայ:]

**СЕДА ПАРСУМЯН-ТАТОЯН**—Своеобразное явление в армяно-арабских культурных связях 13-го века.—Армяно-арабские культурные отношения уходят в глубь веков. Особенно тесными они становятся в 13-ом веке. Одним из ярких свидетельств того является перевод на армянский язык «Сборника фрагментов из сочинений арабских философов», переводчиком которого в арменоведении до последнего времени считался видный деятель армянской культуры того времени Ованес Ерэнкаци. Проведя тщательный текстологический анализ, автор пришла к выводу, что материал сборника целиком взят из «Энциклопедии тайно проповедуемой синклетической ереси Братьев чистоты», и Ерэнкаци в молодости переложил текст не с оригинала, а с пересказа неизвестного арабского миссионера. Доказывая произвольность расположения материалов сборника, автор статьи представляет к публикации составленный в соответствии с философской системой Братьев чистоты текст.